

Դավիթ Կ. Բաբայան (Ստեփանակերտ)
Պատմ. գիտ. թեկնածու

**ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՏԵՂՆ
ՈՒ ԴԵՐԸ «ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄԵՋ***

Է (ժ-Գ) քաղի, թիվ 1 (49) հունվար-մարտ, 2015
ՎԷՆ համահայկական հանդես

Բանալի բառեր – «Աստվածաշնչյան աշխարհաքաղաքականություն», Հայկական լեռնաշխարհ, դրախտ, Աստվածաշունչ, Ավետա, Ղուրան, Թալմուդ, մարդկային քաղաքակրթության հնագույն օջախ, կրոնի ծագման հնագույն շրջան:

«Աստվածաշնչյան աշխարհաքաղաքականություն» հասկացությունն առաջին հայացքից չափազանց անսովոր է թվում և նույնիսկ կարող է անհեթեթություն համարվել: Սակայն իրականում, եթե համալիր կերպով դիտարկենք կրոնի հիմնական դրույթները, այստեղ աշխարհաքաղաքականության հետ նույնական շատ բաղադրամասեր կան :

Աստվածաշնչյան աշխարհաքաղաքականության տակ կարելի է հասկանալ բիրլիական տարածքների նշանակությունը, նրանց դերակատարությունը մարդկային հասարակության և կարևորագույն կրոնների ձևավորման տեսանկյունից և ըստ այդմ՝ դրանց զբաղեցրած տեղը տարբեր ժողովուրդների և պետությունների կյանքում:

Ցանկացած կրոնում գոյություն ունեն **մեղմ ուժի** տարրեր՝ հոգևոր բաղադրամաս, որը ներկայացված է գաղափարախոսական և բարոյական դրույթներով, արժեքների համակարգով, աշխարհայացքով և այլն, ինչպես նաև **կոպիտ ուժի՝** նյութական բաղադրամաս, որն էլ ներկայացված է որոշակի տարածքով, նրա սահմաններում ապրող և տվյալ տարածքի, ինչպես և իրար հետ կապված ժողովրդով կամ ժողովուրդներով: Այդ ամենը, կրոնի համաձայն, տրված է Աստծո կողմից, և մեղմ ուժի տարրերը խախտվելու դեպքում առանձին անհատներ ու ամբողջական ժողովուրդներ կարող են գրկվել կոպիտ ուժի բաղադրամասերից, մասնավորապես տարածքից և ընդհակառակը: Այսպիսի վիրտուալ համատեքստի օրինակներ կարող են ծառայել վտարումը Դրախտից, Համաշխարհային ջրհեղեղը, որոշ պետությունների կործանվելն ու նորերի ստեղծվելը, ժողովուրդ-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 2.02.2015:

ներից ոմանց անհետանալը և ուրիշների հառնելը:

Իհարկէ, յուրաքանչյուր կրոնում, հատկապէս ազգայինում, որպէս գլխավոր գործող անձինք են հանդէս գալիս ժողովուրդը՝ տվյալ կրոնը ստեղծողը, և այն տարածքը, որը նա ստացել է աստվածային նախախնամությամբ: Հեթանոսական կրոններում հաճախ տվյալ տարածքում մարդկանց հետ միասին ապրում են և աստվածներն իրենք: Օրինակ՝ Օլիմպոս լեռը Հունաստանում եղել է հին հույների աստվածների գտնվելու վայրը՝ գերագույն աստված Զևսի գլխավորությամբ:

Սրբազան տարածքների թվում առանձնահատուկ տեղ է գրավում Հայկական լեռնաշխարհը: Դեռևս հայերի մինչքրիստոնէական հավատալիքներում լեռնաշխարհի տարածքը սուրբ էր համարվում, որտեղ բնակվում էին աստվածները: Այսպիսի մոտեցումը ներգծվում է նշված ազգային կրոնի շրջանակներում: Սակայն մենք կանգ չենք առնի սոսկ իրենց հայրենիքի մասին հին հայերի պատկերացումների վրա: Հայկական լեռնաշխարհը չափազանց կարևոր տեղ է գրավում նաև ուրիշ ժողովուրդների հավատալիքներում ու կրոններում, որոնցում տվյալ տարածքը ներկայանում է որպէս մարդկության բնօրրան, որի փաստացի առաջնապրությունը ճանաչվում է հարևան ժողովուրդների կողմից:

Տվյալ համատեքստում կարևորագույն հիշատակություն է ներկայացնում Աստվածաշունչը, որում կա Հայկական լեռնաշխարհի՝ որպէս մարդկության նախահայրենիքի երկու վկայակոչում: Առաջին հիշատակությունը վերաբերում է դրախտին: Եղեմը, «Գիրք Ծննդոցի» համաձայն, գտնվում է արևելքում (ԳԾ, 2:8), և այնտեղից սկիզբ է առնում չորս գետ: Նրանց թվում հիշատակվում են Տիգրիսը և Եփրատը (ԳԾ, 2:10-14), որոնք, ինչպէս հայտնի է, սկիզբ են առնում Հայկական լեռնաշխարհում: Կարելի է ենթադրել, որ մյուս երկու գետերը հանդիսանում են Կուրը և Արաքսը, թեև նրանք անվանված են Փիսոն և Գեհոն¹: Հենց այստեղ էլ Աստված ստեղծել է Ադամին ու Եվային, այսինքն՝ մարդուն:

Ճիշտ այդպիսի պատում կա և Հին Կտակարանում²: Գործնականում համանման տվյալներ է բերում նաև Ավեստան (գրադաշտական կրոնի սուրբ գիրքը), որի համաձայն՝ գերագույն աստված և աշխարհի արարիչ Ահուրա Մազդան բոլոր հողերից ու երկրներից ամենաառաջինը ստեղծել է Աիրյանեմ Վաեջա(հ)ն (Airyanem Vaejah, բառացի՝ «արիացիների տարածություն») Դաիթյա (Däityā) կամ Արաքս սրանչելի գետի մոտ³: Հենց այդ գետի մոտ Ահուրա Մազդան արարել է նաև առաջին մարդուն՝ Գայոմարտին, որի մարմնի մեջ է դրել երկնքի լույսից ու խոնավությունից ստեղծված սաղմ: Այն շողշողում էր արևի պէս...⁴

Ի դէպ, «Գայոմարտ» անունը չափազանց համահունչ է հայերի ինքնանվանումի հետ՝ Հայոմարտ, հայ:

Ղուրանում դրախտի նկարագրությունը շատ ավելի գեղարվեստական է, թեև այնտեղ նույնպէս հիշատակվում են չորս գետերի անուններ՝ Սալսաբիլ, Թասնիմ, Կաֆուր և Զանջաբիլ⁵:

Բայց, ինչպէս հայտնի է, Ադամի ու Եվայի մեղսագործության պատճառով

1 Աստվածաշնչյան դրախտի ենթադրվող տեղակայման մասին մանրամասն տես **Alessandro Scafi**, *Mapping Paradise: A History of Heaven on Earth*, London, University of Chicago Press, 2006, pp. 320, 322, 362. Ուսումնասիրողներից Ս. Պետրոսյանը նույնպէս նշված գետերը տեղադրում է Հայկական լեռնաշխարհում՝ Փիսոնը նույնացնելով Գայ գետի, իսկ Գեհոնը՝ Ճորոխի հետ: Տես **Պետրոսյան Ս.**, Դրախտի գետերի և Խավիլա, Քուշ երկրների տեղադրության շուրջ, ՊԲՀ, 2006, N 2, էջ 238-255):

2 Տես, օրինակ *Torah Genesis 2.23 in Tanakh, A New Translation of the Holy Scriptures According to Traditional Hebrew Text*, The Jewish Publication Society, Philadelphia, Jerusalem, 1985, p.5.

3 Տես **Friedrich Max Müller**, *The Sacred Books of the East*. Volume 4. New York, 2011; this Elibron Classics title is a reprint of the original edition: *The Zend-Avesta. Part 1, transl. by J. Darmesteter*, Sacred Books of the East, Volume 4. Oxford University Press [1880]; **Заратуштра**. Учение огня. Гаты и молитвы, Москва, ЭКСМО, 2010, с. 30.

4 Տես, մասնավորապէս, *Мифологии древнего мира*, Москва, 1977, с. 343, 345; *Зороастрийские тексты*, Москва, 1997, с. 298.

5 Տես *суры Аль-Инсан, Аль-Мутаффифин, Аль-Вакиа и Аль-Каусар*.

Աստված մարդկանց վտարել է դրախտից: Կարելի է ենթադրել, որ նման իրադարձության մասին է պատմում, ձիշտ է, այլ ձևով, նաև Ավետսան. «Արգավանդ հողերից ու երկրներից առաջինը, որ ստեղծել են ես՝ Ահուրա Մազդան, եղել է Աիրյանա Վաեգոն Դաիթյա բարեբեր գետի մոտ, ուր հայտնվել է Անգրա Մայնյու չար ոգին՝ մահվան մարմնացումը, և նա իր կախարդանքի՝ գետի մեջ օձի միջոցով (գործել) ի հակակշիռ արարմանը [Ահուրա Մազդայի]»⁶: Հետաքրքիր է, որ Զարատուտորան Ահուրա Մազդայի՝ իրանական պանթեոնի գերագույն Աստծո հետ խոսել է Հայկական լեռնաշխարհի սահմանագծին՝ Սավալան (Մերելան)⁷ լեռան վրա, որը գտնվում է ներկայիս Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում՝ Ուրմիա լճից հյուսիս-արևելք:

Տվյալ համատեքստում կցանկանայինք բերել շատ հետաքրքիր մի լեգենդ: Արցախում չկա մեկը, որ չիմանա Ճարտար գյուղը, որը հանդիսանում է ԼՂՀ-ի ամենամեծ բնակավայրերից մեկը, և որը տվել է հայտնի շատ մարդիկ: Սակայն քչերը գիտեն տվյալ գյուղի անվանման ստուգաբանությանը վերաբերող, ցավոք, արդեն գործնականում մոռացված լեգենդի մասին: Հենց այստեղ է, ինչպես ասվում է ավանդապատումի մեջ, օձը գայթակղել մեր նախածնողներին, և այդ պատճառով տվյալ տեղանքը ստացել է «չարը տարավ» անվանումը, այսինքն՝ այն տեղը, ուր չարը հրապուրել, գայթակղել է մարդկանց: Ձիշտ է, այդ նույն լեգենդի համաձայն՝ Ադամի ու Եվայի հետնորդները այնտեղ են վերադարձել, որպեսզի իրենց բարեպաշտությամբ քավեն նախնիների մեղքը:

Հայկական լեռնաշխարհի մեկ այլ կարևոր հիշատակություն է հանդիսանում աստվածաշնչյան լեգենդը համաշխարհային ջրհեղեղի և «Արարատի լեռների» մասին: Համանուն լեգենդներ են ունեցել Մերձավոր Արևելքի նաև ուրիշ ժողովուրդներ, մասնավորապես՝ շումերները, որոնց համար Հայկական լեռնաշխարհը եղել է սրբազան տարածք և աստվածների բնակության վայր⁸: Ավելի ուշ իսլամում նույնպես նկարագրվել է ջրհեղեղը, որի արդյունքում Նոյը («Նուխ») իր նավարկությունն սկսել է Կուֆայից, ապա լողացել դեպի Մեքքա, որտեղ շրջան է կատարել դեպի Կաաբա, որից հետո իր տապանով հանգրվանել Արարատի⁹, իսկ ըստ այլ աղբյուրների՝ Կորդվաց աշխարհի ալ-Ջուդդի լեռան վրա: Այդ լեռան տեղադրության վերաբերյալ իսլամում մինչ օրս վիճաբանություններ են գնում: Սակայն մեծամասնությունն, այնուամենայնիվ, նրա գտնվելու տեղը մատնանշում է Հայկական լեռնաշխարհում¹⁰, բայց նրա տարբեր մասերում, մասնավորապես՝ Արարատ լեռից մի քանի տասնյակ կիլոմետր հեռու¹¹: Դրա հաստատումն է հանդիսանում և այն, որ «Նուխի» հնարավոր չորս շիրիմներից երկուսը գտնվում են հենց Հայկական լեռնաշխարհի սահմաններում. մեկը՝ Նախիջևանում, որտեղ Նոյի ենթադրյալ գերեզմանի տեղում դամբարան է կառուցված, մյուսը՝ Զագիրեում (Զագիրեն գտնվում է Հյուսիսային Միջագետքի հետ սահմանագծում): Այս երկու տեղերը մահմեդականների կողմից պաշտվում են որպես սուրբ վայրեր:

Հանրահայտ է, որ «Նախիջևան» տեղանունը ժողովրդական ստուգանաբանությամբ նշանակում է «առաջին իջևան» (կանգառ), այսինքն՝ այն տեղը, ուր Նոյն ու նրա ընտանիքը կանգ են առել հետջրհեղեղյան հողի վրա: Հենց այստեղ է, Հին Կտակարանի համաձայն, Նոյը ջրհեղեղից հետո առաջին զոհասեղանը կառուցել Աստծուն զոհեր մատուցելու համար, և այստեղ էլ Ամենաբարձրյալը

6 The Zend-Avesta. Part 1, Vendidad, Fargard I, p. 4-5. **Заратуштра**. Учение огня. Гаты и молитвы, указ.соч., с.43.

7 Տե՛ս **Russell James**, Zoroastrianism in Armenia, Harvard University, 1987, p.164.

8 Տե՛ս մասնավորապես Хрестоматия по истории древнего Востока, Москва, 1963; **Краммер С.**, История начинается в Шумере, Москва, 1991.

9 Տե՛ս **Hendershon James**, Penance: Genesis and Genocide, Trafford, 2013, p.115. Ա. Մուշեղյանը, վերլուծելով սկզբնաղբյուրները, ցույց է տվել, որ Նոյան տապանն իջել է հենց Արարատ լեռան վրա: Տե՛ս **Մուշեղյան Ա.**, Ո՞ր լեռան վրա է իջել Նոյան տապանը, ՊԲՀ, 2003, N 1, էջ 3-39:

10 Տե՛ս օրինակ, **Lewis J.**, "Noah and the Flood: In Jewish, Christian, and Muslim Tradition", The Biblical Archaeologist, December 1984, p.237.

11 Տե՛ս մասնավորապես **Fasold David**, The Ark of Noah, New York, Wynwood, 1988. pp. 92-93.

պայման է կապել Նոյի հետ¹²: Այդ պայմանագիրը երկրորդն է դարձել Ադամի հետ Աստծո կնքած պայմանագրից հետո:

Պետք է նշել, որ կա նաև չափազանց հետաքրքիր, բայց քիչ հայտնի մի լեգենդ մեկ վայրի մասին ևս, որն անմիջականորեն կապված է տապանի և նորացված աշխարհի հետ: Այդ լեգենդի համաձայն, երբ Նոյի տապանը դեմ է առել Արարատին, նրանից պոկվել է մեծ քառակող գերանի ձևի մի կտոր, և ջուրն այն տարելահացրել է այնտեղ, ուր ներկայումս գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Շոշ գյուղը: Այդ տեղն անվանել են «Տապանակերտ», և տվյալ քառակող գերանը ժամանակի ընթացքում արմատներ է ձգել ու սկսել շիվեր (Արցախի բարբառով՝ շոշ) տալ, ինչից էլ գյուղը ստացել է իր անվանումը: Պետք է ասել, որ մինչ այժմ այդ գյուղը երբեմն անվանում են նաև «թապանգրադ», որի հայերեն «կերտ» վերջավորությունը ստացել է ռուսերեն «գրադ» ձևը: Խորհրդային ժամանակաշրջանում, երբ կրոնն արգելքի տակ էր, և նրա դեմ ակտիվ պայքար էր տարվում, կոմունիստական քարոզիչներն ակտիվորեն շրջանառության մեջ են մտցրել «տապան» անվանման «այլընտրանքային» և չափազանց գռեհիկ վարկած՝ դա կապելով սննդի մեջ օգտագործվող, սպանդի ենթարկված անասունի փորոտիքի՝ «թափանի» (արցախյան բարբառի բառապաշարից) և իբր այդ սննդատեսակի նկատմամբ տեղական բնակչության բուռն հակման հետ, թեև փորոտիքի հանդեպ առանձնակի համադամասիրություն այդ գյուղի բնակչության մոտ չի նկատվում: Դրանով նրանք, նախ, ջանում էին կրոնը ներկայացնել որպես «փորոտիք», այսինքն՝ անպետքություն, և երկրորդ՝ օգտագործելով երկու անվանումների հնչյունային նմանությունը, գյուղի բնակչության հիշողությունից ջնջել հին ավանդապատումներն ու լեգենդները: Իսկ հնաբնականներին խստիվ արգելվել էր խոսել տեղանվան ճշմարիտ ստուգաբանության մասին: Նույնիսկ մի քանի հոգի ճնշամիջոցների են ենթարկվել և Սիբիր արքայությունը ենթադրվել են նրանի համար, որ ինչ-որ տեղ հիշատակել են գյուղի անվանումի ծագման նախնին վարկածը:

Հայկական լեռնաշխարհը ջրհեղեղից հետո էլ շարունակել է մնալ որպես աստվածաշնչյան իրադարձությունների կենտրոնական թատերաբեմերից մեկը: Դիտարկենք այն իրադարձությունները, որոնք կապված են աստվածաշնչյան մեկ ուրիշ գործող անձի՝ Աբրահամի հետ, որը հանդիսանում է շատ ժողովուրդների նախակարապետը: Ինչպես հայտնի է, Աբրահամը եղել է Նոյի ավագ որդի Սեմի ծոռ երեքի ժառանգը և ծնվել է շումերական Ուր քաղաքում, մ.թ.ա. 21-20-րդ դարում¹³: Այնուհետև Աբրահամի հայրը՝ Թարան, հեռացել է Ուրից և հետը վերցնելով իր ընտանիքը՝ որդիներ Աբրահամին, Նաբորին, վաղամեռիկ որդի Առանի որդի Ղովտին, ճանապարհվել է Միջագետքի հյուսիս՝ Խառան (ներկայումս՝ Հառան) քաղաքը, որը գտնվում էր Հայկական լեռնաշխարհի հարևանությամբ՝ Միջագետք Ասորվոցում:

Խառանը աշխարհի հնագույն քաղաքներից է և բազմիցս է հիշատակվում Աստվածաշնչում: Այդ քաղաքը հռոմեական աղբյուրներում հայտնի է նաև Կարրա անվանումով, որտեղ շատ ավելի ուշ՝ մ.թ.ա. 53 թվականին, տեղի է ունեցել հին աշխարհում հայտնի մի ճակատամարտ, որի արդյունքն է դարձել Կրասոսի հրամանատարությամբ հռոմեական զորքերի պարտությունը Սուրենի գլխավորած պարթևներից: Խառանում մահացել և թաղվել է Աբրահամի հայր Թարան (Գծ 11-32):

Խոսելով Խառանի մասին՝ պետք է նշել, որ Աբրահամի ժամանակներում այդ քաղաքը գտնվել է Պաղղան-Արամ (կամ Պաղղան-արամ, «Արամի դաշտ») կոչվող երկրի սահմաններում¹⁴: Աբրահամի սերունդներն առանձնահատուկ

12 Genesis 8.21.

13 Մանրամասն տե՛ս Encyclopedia of Religion, Second Edition, Thomson Gale, New York, 2005, Vol. 1. pp. 13-16.

14 Տե՛ս **Чемберлен Гаустон**, Евреи, их происхождение и причины влияния в Европе, СПб., 1907, с. 48, 49.

կապեր են ունեցել տվյալ երկրի հետ և, մի շարք հետազոտողների կարծիքով, այստեղ ապրել են մի քանի հարյուրամյակ՝ այն համարելով իրենց հայրենիքը: Աբրահամը, արդեն Քանաան տեղափոխվելուց հետո, հոգու կարոտով է վերհիշել տվյալ տարածքի մասին՝ մշտապես կապ պահպանելով նրա հետ¹⁵: Աստված պատահականորեն չէ Աբրահամի հետ պայմանագրում խոստացել նրա սերունդների տիրակալությունը տալ Եգիպտոսի Նեղոս գետից մինչև Եփրատ մեծ գետն ընկած հողերը¹⁶:

Աբրահամի մասին խոսելով՝ անհրաժեշտ է հիշատակել նաև չափազանց հետաքրքիր աստվածաշնչյան մի անձի, որը հայտնի է Մելքիսեղեկ անունով: Աստվածաշունչն ահա թե ինչ է պատմում Մելքիսեղեկի մասին.

«Քանզի այս Մելքիսեղեկը թագավոր էր Սաղեմի (Երուսաղեմի – Դ. Բ.), բարձրեալն Աստծոյ քահանայ, որ Աբրահամին ընդառաջ ելավ, երբ նա վերադառնում էր թագավորներին կոտորելուց և օրինեց նրան. և Աբրահամը ամէն ինչից տասնորդներ տուեց նրան. «Մելքիսեղեկ՝ նախ թարգմանում է՝ արդարության թագաւոր, ապա՝ թագաւոր Սաղեմի, այսինքն՝ թագաւոր խաղաղութեան: Նա անհայր, անմայր էր, առանց ազգատոհմի. ո՛չ օրերի սկիզբ ունէր. և կեանքի վախճան. նմանուելով Աստուծոյ Որդուն՝ նա մնում է մշտնջենապես քահանայ» (Թուղթ երբայեցիներին, 7:1): Ուղղափառ սրբապատկերագրության մեջ նույնիսկ օգտագործվում է «Մեծ Հայրապետ Հիսուս Քրիստոս» կերպարը՝ որպէս Քրիստոս նախաքահանայապետի պատկերման տարբերակներից մեկը, որի հիմքում ընկած է «Երզնկեց Տերը և էլ չի գղջայ. դու յաւիտեան քահանա ես ըստ Մելքիսեղեկի կարգի» (Սաղմ. 109 (110:4)¹⁷: Մելքիսեղեկն, այսպիսով, բարձրագույն հիերարխիական տեղերից մեկն է գրավում ինչպես հուդայականության, այնպես էլ քրիստոնեության մեջ:

Այնինչ չափազանց հետաքրքիր են այդ աստվածաշնչյան անձի կյանքի մի շարք տվյալներ: Ենովքի¹⁸ գրքի սլավոնական խմբագրվածքի (տարբերակի) համաձայն, որը բխում է Եսեյան բնօրինակից, Նոյի եղբայր Նիրի ամուլ և զառամյալ կիւր հրաշքով հղիացել է առանց ամուսնու հետ մարմնական շվման, նրա ոտքերն ընկել, մահացել և դրվել դագաղի մեջ, իսկ Նիրն ու Նոյը գնացել են նրա գերեզմանի համար փոս փորելու. վերադառնալուց դագաղի մոտ գտել են մոտ երեք տարեկան մի խորհրդավոր տղա երեխայի՝ կրծքին սրբության կնիք. նրան քահանայական շորեր են հագցրել և կոչել Մելքիսեղեկ, իսկ 40 օր հետո Գաբրիել հրեշտակապետը Մելքիսեղեկին տանում է Եդեմ, որտեղ նա պետք է վերապրի ջրհեղեղի ժամանակը, որպեսզի կատարի իր առաքելությունը և հավիտյանս քահանա մնա¹⁹: Այսպիսով, Մելքիսեղեկը, դեռևս մինչև Նոյն ու Համաշխարհային ջրհեղեղը, դարձյալ փոխադրվել է Եդեմ, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհ՝ դառնալով Ադամից հետո առաջին մարդը, որն Աստծո հրամանով նորից վերադարձվել է Դրախտ, որպեսզի այնուհետև դառնա առաջին և հավերժական նախաքահանան:

Հայկական լեռնաշխարհի հետ է սերտորեն կապված եղել Երեմիայի կոչը՝ Բաբելոնի դեմ (որը մ. թ.ա. 586 թվականին ոչնչացրել է Հուդայական թագավորությունը և գերել հրեաներին) հանել հարևան երկրները, որոնցից առաջինները նշվում են Արարատյան թագավորությունները:

Մ.թ.ա. 2-րդ դարի սկզբին Հայկական լեռնաշխարհից դեպի հարավ ստեղծվեց Ադիաբենե անկախ թագավորությունը: Այդ երկրի ազգային կազմը բավականին

15 Տե՛ս նշվ. աշխ., c.51.

16 Տե՛ս Genesis 15.18.

17 Տե՛ս **Квливидзе Н.**, «Великий Архиерей Иисус Христос», Православная энциклопедия, т. VII, Москва, Церковно-научный центр «Православная энциклопедия», 2004, с. 451-452; Torah Genesis 15.10 in Tanakh, A New Translation of the Holy Scriptures According to Traditional Hebrew Text, указ. соч., c.21.

18 Սլավոնական Ենովքի գիրքն իրենից ներկայացնում է մի տեքստ, որը ներկայումս հայտնի է միայն սլավոնական տարբերակով, որն էլ արտացոլվում է իր անվան մեջ:

19 Տե՛ս Мифологический словарь, Москва, «Советская энциклопедия», 1990, с. 352.

խայտաբղետ էր. այստեղ ապրում էին արամեացիներ, հայեր, հույներ, հրեաներ, պարսիկներ և այլք: Ադիաբենեի թագավորությունը Տիգրան Մեծի դաշնակիցն էր, այն մտավ Հայկական կայսրության կազմը, մասնակցեց հայոց արքայի բոլոր արշավանքներին: Մ. թ. 1-ին դարի 30-ական թվականներին Ադիաբենեում կառավարող դինաստիան ընդունեց հուդայականությունը, իսկ ապա այդ կրոնը դարձրեց պետական: Տվյալ համատեքստում առավել հայտնիներն են Հեղինե թագուհին և նրա որդին՝ Ադիբենեի թագավոր Մոնոբազոս (Մանավազ) 2-րդը: Հեղինեն չափազանց առատաձեռն նվերներ է մատուցել Երուսաղեմի տաճարին, ինչպես նաև սովից փրկել է քաղաքը՝ իր փողերով հաց և արմավ գնելով Եգիպտոսից ու Կիպրոսից²⁰:

Բայց ամենաառատաձեռնը եղել է Մոնոբազոս 2-րդ թագավորը: Թալմուդը հաղորդում է, որ Մոնոբազոս 2-րդ թագավորն իր բոլոր միջոցներն ու նախնիների հավաքած գանձերը ծախսել է անբերրի տարիներին հրեաներին օգնելու համար: Երբ եղբայրները նրան կշտամբել են, ասելով՝ «Քո ծնողները խնայողություններ են արել՝ մեծացնելով իրենց հայրերից ստացածը, իսկ դու դրանք ցարցարիվ ես անում», նա պատասխանել է. «Իմ ծնողները հարստությունը կուտակել են երկրի վրա, իսկ ես՝ երկնքում. նրանք թաքցրել են այնտեղ, որտեղ օտար ձեռքը կարող է տիրել դրանց, իսկ ես դնում եմ այնտեղ, որտեղ ոչ ոք դրանք չի կարող ինձնից խլել. նրանք փող են հավաքել (կուտակել), իսկ ես հոգիս եմ փրկում»²¹: Ադիաբենեն ակտիվորեն մասնակցել է 66-73 թթ. հրեական պատերազմին՝ իր հավատակիցներին սատարելով Հռոմի դեմ: Հովսեպոս Փլավիոսը, պատմելով ճակատամարտերից մեկին ադիաբենեցիների մասնակցության մասին, նշում է, որ ամենախիզախներն էին ադիաբենական թագավոր Մոնոբազոսի ազգականները՝ Մոնոբազոսն ու Կենեդյոսը²²:

Այնինչ կարելի է ենթադրել, որ Մոնոբազոսների թագավորական դինաստիան սկիզբ է առել հայերի նախահայր Հայկ Նահապետի որդիներից մեկը հանդիսացած Մանավազից, և տվյալ դինաստիայից են առաջ եկել Մանավազյան, Բզունյաց և Որդունի նախարարական տոհմերը²³:

Բայց Հայկական լեռնաշխարհն առանձնահատուկ նշանակություն ունի ոչ միայն հարևան ժողովուրդների ու երկրների առասպելաբանության մեջ: Նա կարևոր դեր է խաղում նաև այն երկրների համար, որոնք աշխարհագրական առումով բավականին հեռու են գտնվում մեր տարածաշրջանից: Տվյալ համատեքստում կցանկանայինք հատկապես նշել ռուս ժողովրդի և Ռուսաստանի համար չափազանց կարևոր էպոսը՝ բիլինաները ռուս դյուցազունների մասին: Ռուսաց երկրի կենտրոնական պերսոնաժներից մեկն ու գլխավոր դյուցազնը Իլյա Մուրոմեցն է, ով օրհնություն է ստացել լեգենդար դյուցազն Սվյատոգորի կողմից, որն Իլյային կանչում է դեպի «Սուրբ սարերն Արարատյան»²⁴:

Վերը բերված փաստերը աստվածաշնչյան աշխարհաքաղաքականության մեջ Հայկական լեռնաշխարհի տեղի ու դերի մասին վկայությունների սուկ մի փոքր մասն են: Տվյալ համատեքստում անհրաժեշտություն է ծագում պատասխանել երկու տրամաբանական հարցի: Նախ, ինչի հետ է կապված այդչափ կարևոր նշանակությունը, որը Հայկական լեռնաշխարհին տրվում է զանազան ժողովուրդների հնագույն կրոնական տեքստերում ու առասպելներում: Երկրորդ, այդ ամենն ինչպիսի գործնական արժեք ունի հայ ժողովրդի համար:

20 Տե՛ս օրինակ, **Флавий Иосиф**, Иудейские древности (Книги 1–20), Москва, “Феникс”, 2000, с.553.

21 Еврейская энциклопедия. Свод знаний о еврействе и его культуре в прошлом и настоящем, под редакцией **А. Гаркави** и д-ра **Л. Каценельсона**, издательство Общества для научных еврейских изданий и Издательства Брокгауз-Ефрон, т. 11, СПб., 1911, с. 252–253.

22 Տե՛ս **Флавий Иосиф**, Иудейская война, II, 19. 2. <http://www.vehi.net/istoriya/israil/flavii/voina/02.html>

23 Տե՛ս մասնավորապես, «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ.1, Եր., 1974, էջ 73–74, «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ.7, Եր., 1981, էջ 214–215:

24 Տե՛ս Былины, Москва, «Тerra», 1998, сс. 25–26.

Այս հարցերի հնարավոր պատասխանները գտնվում են երկու հարթությունում: Եթե հենվենք աստվածաբանության դրույթների վրա, ապա հարկ կլինի անվերապահորեն ընդունել Դրախտի, Ջրհեղեղի և այլնի մասին աստվածաշնչյան ավանդությունների ճշմարտությունը: Այս համատեքստում Հայկական լեռնաշխարհը ներկայանում է որպես Աստծո կողմից ընտրյալ տարածք, մարդկության նախահայրենիք, մարդկություն, որն Աստծո կողմից պատժվել է մեղքերի համար և ոչնչացվելով՝ նորովի է վերածնվել Հայկական լեռնաշխարհում:

Տվյալ համատեքստում հատուկ հետաքրքրություն է ներկայացնում նաև վարկածն այն մասին, որ հենց Հայկական լեռնաշխարհն է հանդիսանում հնդեվրոպացիների և նախահնդեվրոպական լեզվի պատմական նախահայրենիքը²⁵: Մինչ օրս հայերենում պահպանվել են բազմաթիվ նախահնդեվրոպական բառեր: Օրինակ՝ միջին վիճակագրական հայի կամ անգլիացու կողմից օգտագործվող բառերի առնվազն 10-15 %-ը գործնականում համանման են, ըստ որում այդ բառերը փոխառված չեն լատիներենից, հունարենից կամ այլ լեզուներից: Այդպիսի բառերը հատկապես շատ են հայոց լեզվի բարբառներում, մասնավորապես՝ Արցախի բարբառում²⁶: Ամենայն հավանականությամբ, հատկապես հաշվի առնելով Հայկական լեռնաշխարհի դերն ու տեղը Առաջավոր Ասիայի ժողովուրդների դիցաբանության և պատմության մեջ, այս տարածաշրջանը կարող էր լինել նաև այլ ժողովուրդների կազմավորման վայր:

Հայկական լեռնաշխարհը հանդիսանում է նաև բազմաթիվ արհեստների հայրենիքը: Շատ գիտնականներ գտնում են, որ հենց Հայկական լեռնաշխարհում է հայտնագործվել երկաթածուլման տեխնոլոգիան²⁷: Հայկական լեռնաշխարհը եղել է նաև երկրագործության սաղմնավորման կարևորագույն կենտրոնը: Հնագույն երկրագործության կարևորագույն մարզ է հանդիսանում մասնավորապես Միջին արաբսյան ցածրահարթությունը, իսկ առավել հին երկրագործական-անասնապահական հուշարձանները, որոնք թվագրվում են մ.թ.ա. 4-5-րդ հազարամյակներով, սովորաբար գտնվում են Երասխի (Արաքսի) 1-ին վերողողաղաշտային սանդախուլի մակերեսին²⁸: Դրան մեծապես նպաստել են նաև տարածաշրջանի բնական պայմանները, այստեղի մշակաբույսերի առկայությունը: Այսպես՝ Հայաստանի տարածքում չափազանց մեծ է վայրի ցորենի տեսակային բազմազանությունը. այստեղ երևան է հանվել հացահատիկայինների տարատեսակների

25 Հայկական վարկածի և նրա հետ կապված հարցերի վերաբերյալ, մանրամասն տես **Шрадер О.**, Сравнительное языковедение и первобытная история, С-Пб, 1886; **Schmidth J.**, Die Urheimat der Indogermanen und das europaische Zahlensystem, Weimar, 1890; **Илич-Свитич В.**, Проблемы индоевропейского языкознания, М., 1964; **Mallory J.**, “A short of the Indo-European problem”, Journal of Indo-European Studies, N1, Spring 1973; **Гамкрелидзе Т., Иванов В.**, «Миграции племен-носителей индоевропейских диалектов с первоначальной территории расселения на Ближнем Востоке в исторические места их обитания в Евразии», «Вестник древней истории», N 2, Москва, Наука, 1981; **Гамкрелидзе Т., Иванов В.**, Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, том II, Тбилиси, 1984; **Renfrew**, Archaeology and Language: The Puzzle of Indo-European Origins, NY, Cambridge University, 1987; **Gamkrelidze T., Ivanov V.**, “The Early History of Indo-European Languages”, Scientific American, March 1990; **Luigi L. Cavalli-Sforza**, Paolo Menozzi, and Alberto Piazza, “Demic Expansions and Human Evolution,” Science, vol. 259, January 29, 1993; **John N. Wilford**, “Site in Turkey Yields Oldest Cloth Ever Found,” The New York Times, July 13, 1993; **L. L. Cavalli-Sforza, Paolo Menozzi and Alberto Piazza**, The History and Geography of Human Genes, Princeton University Press, 1994; **Luigi Luca Cavalli-Sforza**, Genes, Peoples and Languages, NY, North Point Press, 2000; **Russell D. Gray & Quentin D. Atkinson**, “Language-tree divergence times support the Anatolian Theory of Indo-European origin,” Nature, vol. 426, Nov. 26, 2003; **Nicholas Wade**, “Biological dig for the roots of language,” International Herald Tribune, March 18, 2004.

26 Տվյալ թեմայի վերաբերյալ տես «Գարուն» ամսագիր, N 5-6, 2013, էջ 16-27:

27 Տես մասնավորապես, **Leslie Aitcheson**, A History of Metals, Vol. I, II, Interscience, New York, 1960; **David M. Lang**, Armenia: Cradle of Civilization, London, 1970.

28 Տես **Торосян Р., Микаелян Г, Деведжян С**, Разведки древнейших памятников Армении, Москва, 1970, с. 386-387.

ընդհանուր թվից՝ 650-ից, ավելի քան 200-ը²⁹:

Հայկական լեռնաշխարհը նաև կրոնի ծագման հնագույն շրջաններից մեկն է: Տվյալ համատեքստում առավել ուշագրավներից մեկը Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան վերջավորության մոտ գտնվող Պորտասար տաճարային համալիրն է: Նրա տարիքը կազմում է 12000 տարուց ոչ պակաս և հանդիսանում է հնագույն տաճարային համալիրը հողագնդի վրա:

Հայկական լեռնաշխարհի կարևորությունը որոշվում է նաև աշխարհագրությամբ: Այնպիսի գետեր, ինչպիսիք են Տիգրիսն ու Եփրատը, առանց որոնց անհնար կլինեին Միջագետքի քաղաքակրթության ծագումն ու զարգացումը, սկիզբ են առնում Հայկական լեռնաշխարհում: Հենց միայն դա բավական է եղել, որ համապատասխան վերաբերմունք ստեղծվի տվյալ տարածաշրջանի հանդեպ: Թեև, իհարկե, առանց զարգացած քաղաքակրթության, նյութական ու հոգևոր հարուստ մշակույթի աշխարհագրական գործոնները երկրորդական նշանակություն կունենային:

Բնականաբար, վերը նշված բոլոր ասպեկտները համապատասխան ձևով դրոշմվել են հնագույն մարդկանց գենետիկական հիշողության մեջ, որոնց արտահայտությունն են դարձել առասպելները, ասքերն ու լեգենդները: Հենց դրա համար է Հայկական լեռնաշխարհը տարբեր ժողովուրդների մոտ ներկայանում որպես դրախտ, աստվածների կողմից ստեղծված առաջին երկրի տարածք և այլն:

Քննության առնելով Հայկական լեռնաշխարհի կարևորությունը տարբեր ժողովուրդների դիցաբանության և կրոնների մեջ, ձգտելով հիմնավորել նման ընկալման շարժառիթները՝ անհրաժեշտ է բացահայտել այդ ամենի գործնական նշանակությունը հայ ժողովրդի համար: Իհարկե, դիցաբանության ու կրոնի հարցերը մարդկության զարգացման տվյալ փուլում իրենց առանձնահատկությունն ունեն: Սակայն հավատացյալ մարդկանց համար այդ ասպեկտները հրատապ են ինչպես երբեք, իսկ նրանց ընդդիմախոսների համար շատ ավելի կարևոր են այլ գործոններ: Բայց մի բան պարզ է. Հայկական լեռնաշխարհը հայ ժողովրդի հայրենիքն է, մինչ օրս հանդիսանում է ոգեշնչման աղբյուր, հոգեպես սնում է հայությանը, ինչը թույլ է տալիս գոյատևել այսքան բարդ շրջապատում և հաղթահարել անհաղթահարելի թվացող խոչընդոտներ:

Էներգիայի այդպիսի աղբյուրն ասիմետրիկ շահամիտումներ է առաջ բերում հայ ժողովրդի մոտ, առանց որի պարզապես անհնար է հավասարակշռություն պահպանել նյութական տեսակետից առավել ուժեղ հարևանների հետ, որոնցից մի քանիսն ունեն թշնամական նպատակներ ու ծրագրեր:

Դավիթ Կ. Բաբայան – գիտական հրապարակումները վերաբերում են աշխարհաքաղաքականության և քաղաքական պատմության հիմնահարցերին: Տպագրել է 4 մենագրություն: Հեղինակ է մոտ 300 հրապարակումների, այդ թվում՝ տասնյակ գիտական հոդվածների:

29 Տե՛ս **Долуханов П.**, Палеогеография и первобытные поселения Кавказа и Средней Азии в плейстоцене и голоцене, ՊԻՇ, N 2, 1979, с. 68.

Summary

THE ROLE AND PLACE OF THE ARMENIAN HIGHLAND IN “BIBLICAL GEOPOLITICS”

David K. Babayan (Stepanakert)

Key words – Biblical geopolitics, Armenian highland, Paradise, Bible, Avesta, Quran, Talmud, cradle of human civilization, oldest place of religion formation.

The article reviews the sacral and civilization significance of the Armenian Highland. Mythological, religious and historical narratives and facts related to this location are presented and analyzed. Conclusions are made about the significance of the Armenian Highland from those perspectives in ideological and practical dimensions.

Резюме

РОЛЬ И МЕСТО АРМЯНСКОГО НАГОРЬЯ В «БИБЛЕЙСКОЙ ГЕОПОЛИТИКЕ»

Давид К. Бабаян (Степанакерт)

Ключевые слова – Библейская геополитика, Армянское нагорье, Рай, Библия, Авеста, Коран, Талмуд, колыбель цивилизации, древнейший очаг образования религии.

В статье рассматривается сакральное и цивилизационное значение Армянского нагорья, приводятся мифологические, религиозные и исторические сюжеты и факты, связанные с данной местностью. Делается вывод о значимости этой особенности Армянского нагорья в идеологической и практической плоскостях.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԱՆԱԿՈՒՄԻՏԻ

Է. (ՃԳ) քաղաք, քաղ 1 (49) հունվար-մարտ, 2015

ՎԷՋ համահայկացիական հանրապետության